ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/10

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս

Մասնակցությամբ ՀՀ առողջապահության նախարարության լիազորված ներկայացուցիչներ՝

Հ. Մնացականյանի (լիազորագիր տրված՝ 22.04.2019թ.)

Հ. Սարգսյանի (լիազորագիր տրված՝ 22.04.2019թ.)

«Կոնցեռն- Էներգոմաշ» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝

Դ. Առաքելյանի (լիազորագիր տրված՝ 22.04.2019թ.)

Ս. Աղաբեկյանի (լիազորագիր տրված՝ 22.04.2019թ.)

Ա. Բատիկյանի (լիազորագիր տրված՝ 22.04.2019թ.)

«ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝

Ս. Գրիգորյանի (լիազորագիր տրված՝ 22.04.2019թ.)

Ա. Ղազարյանի (լիազորագիր տրված՝ 22.04.2019թ.)

Քննելով ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար գլյուկոմետրի թեսթ-երիզների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից

16.04.2019թ. ներկայացված և 18.04.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/10 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի վերաբերյալ

1.1 «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով գնման առարկայի անվանումը նշված է «արյան փորձանմուշի վերցման նշտարներ», հրավերով նախատեսված «ԳԼՅՈՒԿՈՄԵՏՐԻ ԹԵՍՏ-ԵՐԻԶՆԵՐԻ» մատակարարման պայմանագիր կնքելու շրջանակներում: Սակայն, մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում գնման առարկան նշված է «Արյան փորձանմուշի վերցման նշտարներ Գլյուկոմետրի թեստ-երիզներ N50»:

1.2 Տեխնիկական բնութագրի ապրանքային նշանը նշված է «Contur plus», սակայն գնման առարկան չի համապատասխանում հրավերով նշված տեխնիկական բնութագրով նշված ապրանքային նշանին, և փորձանմուշի վրա նշված է «Contour plus»: «Contour plus»ապրանքային նշանի գրանցված է արտադրողի կողմից, իսկ ապրանքային նշանի սխալ շահարկումը ենթադրում է այլ ապրանքային նշանով ապրանք և ոչ այդ արտադրողի կողմից՝ տվյալ դեպքում ոչ Ասցենզայի, որը նշել է:

1.3 Ծագման երկիրը նշված է Ճապոնիա, սակայն ներկայացված սերտիֆիկատներում նշված է մեկ Ինդոնեզիա, իսկ մեկ այլ սերտիֆիկատում Ճապոնիա, որը շփոթություն է առաջացնում տվյալ ապրանքի ծագման երկիր հանդիսանալու վերաբերյալ:

1.4 Վերոհիշյալ հրավերի հավելված 6.1-ում նշված տեխնիկական բնութագրեր բաժնում մասնակիցը ներկայացրել է հետևյալ բնութագրեր՝

ա. Աշխատանքի ջերմաստիճան 5-45 աստիճան C, սակայն նման ջերմաստիճան չի նախատեսված թեստ-երիզների համար, թեստ-երիզների համար այդ ջերմաստիճանը

կազմում է 0-30 աստիճան C, ինչպես նաև նման պայման Պատվիրատուի կողմից նախատեսված չի եղել:

բ. Աշխատանքի հարաբերական խոնավություն՝ 10-93%: Այս բնութագրությունը նախատեսված չէ թեստ-երիզների համար, ինչպես նաև նման պայման Պատվիրատուի կողմից նախատեսված չի եղել:

գ. Հեմոտոկրիտի թույլատրելի միջակայքը՝ 10-70%: Այս բնութագրությունում առկա է անհամապատասխանություն պաշտոնապես ներկայացված տեխնիկական բնութագրում նշվածի և թեստ-երիզների տուփի մեջ առկա բնութագրի միջև, ինչպես նաև նման պայման Պատվիրատուի կողմից նախատեսված չի եղել:

դ.Գործառնական բարձրություն ծովի մակարդակից մինչև 6300մ: Այս բնութագրությունում առկա է անհամապատասխանություն պաշտոնապես ներկայացված տեխնիկական բնութագրում նշվածի և թեստ-երիզների տուփի մեջ առկա բնութագրի միջև, ինչպես նաև նման պայման Պատվիրատուի կողմից նախատեսված չի եղել:

ե. Արյան ծավալի անբավարարության դեպքում 30վ. ընթացքում արյուն ավելացնելու երկրորդ հնարավորություն (Second chance): Այս բնութագրությունը ևս նախատեսված չէ թեստ-երիզների համար, ինչպես նաև նման պայման Պատվիրատուի կողմից նախատեսված չի եղել:

զ. Տվյալների փոխանցում համակարգչի՝ USB լարի միջոցով: Այս բնութագրությունը ևս նախատեսված չէ թեստ-երիզների համար, ինչպես նաև նման պայման Պատվիրատուի կողմից նախատեսված չի եղել:

Ընկերությունը հայտնել է, որ ներկայացված բոլոր կետերը չեն բնութագրում պատվիրատուի կողմից պահանջվող թեստ-երիզ գնման առարկան, և որ ավելին, Պատվիրատուն չի պահանջել պարզաբանում մասնակցից, ինչը նշանակում է, որ մասնակիցը պայմանագիր կնքելու դեպքում պարտավորվում է մատակարարել պատվիրատուին թեստ-երիզ, որի տեխնիկական բնութագիրը պարունակելու է նման կետեր:

1.5 Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուի կողմից ներկայացված է պահանջ՝ փաթեթավորումը պետք է լինի գործարանային տուփով, բայց ոչ ավել քան 100 հատ: Թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից:

Մատակարարի կողմից ներկայացվող որակավորման փաստաթղթերով կամ տեխնիկական բնութագրով ներկայացման վերոնշյալ պահանջը հավաստող որևէ փաստ բացակայում է:

Ընկերությունը նշել է, որ համաձայն ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ կառավարության 526-ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի բ մասով հաստատված մասնակիցների որակավորման չափանիշները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջին.

- «Տեխնիկական միջոցներ որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, եթե Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն տվյալ գնումը կատարելու նպատակով կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման համար պահանջվում են համապատասխան տեխնիկական միջոցներ:

Ընկերությունը նշել է, որ մասնակցի կողմից ներակայացվող ապրանքատեսակի տուփերի վրա նման պայման նշված չէ՝ կցելով նշանի նմուշը:

2. *Պատվիրատուի կողմից ընթացակարգային խախտումներ*

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի կողմից ներկայացված արձանագրություն թիվ 2-ի ժամանակացույցի համաձայն, ս.թ. փետրվարի 11-ին ժամը 15:00-ին տեղի է ունեցել հայտերի ներկայացման վերջնաժամկետը, նույն թվականի փետրվարի 13-ին տեղի է ունեցել փոխադարձ աճուրդը, հայտերի բացման նիստը տեղի է ունեցել ս.թ. փետրվարի 14-ին ժամը 12:00-ին, նույն նիստի 6-րդ կետով 1-ին տեղ զբաղեցնող «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, որին նույն նիստի արձանագրության 7-րդ կետով առաջարկվել է ներկայացնել որակավորումն հիմնավորող փաստաթղթերը և վերջնաժամկետ է սահմանվել 19.02.2019թ. ժամը 18:00-ն:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերը և տեխնիկական բնութագիրը:

Եթե չի ներկայացնում մասնակիցը սահմանված ժամկետում, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Ընկերությունը նշել է, որ նույն արձանագրության 9-րդ կետում նշված է, որ հանձնաժողովի հարջորդ նիստը անցկացվելու է փոքր դահլիճում մասնակիցների կողմից որակավորումն հիմնավորող փաստաթղթերի ներկայացումից հետո, սակայն արձանագրության մեջ առաջին տեղը զբաղեցնող միայն մեկ մասնակցի անուն է նշված:

Պատվիրատուի արձանագրություն թիվ 3-ում՝ արտահերթ նիստում, որը տեղի է ունեցել փետրվարի 25-ին ժամը 10:00-ին, պատվիրատուն նշում է, որ իր «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով գնման ընթացակարգում ի հայտ են եկել խնդիրներ, սակայն մեր կողմից ս.թ. փետրվարի 21-ին ներկայացվել է հարցում Պատվիրատուին, որով խնդրել է ներկայացնել «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը, սակայն Պատվիրատուն այդ գրությանը պատասխանել է փետրվարի 28-ին, որում նշել է, որ Մասնակիցը որակավորման փաստաթղթեր ներկայացրել է ս.թ. փետրվարի 25-ին, իսկ Արձանագրություն թիվ 4-ի 2-րդ կետում նշված է, որ դրանք ներկայացվել են 18.02.2019-ին, իսկ էլեկտրոնային փոստով փետրվարի 27-ին:

Արձանագրություն թիվ 3-ի 2-րդ կետով ևս մեկ անգամ հիմք ընդունելով ՀՀ ԿՈ 526-Ն որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետը, մասնակցին տրամադրվում է ևս 3 աշխատանքային օր որակավորման փաստաթղթեր ներկայացնելու համար՝ վերջնաժամկետ սահմանելով 28.02.2019թ.:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Էլեկտրոնային աճուրդի իրականացման 526-Ն կարգերի համաձայն հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում (Ընկերությունը նշել է, որ տվյալ դեպքում, անգամ եթե հիմք ընդունենք կրկնակի ժամկետի տրամադրման փաստը, ապա այդ ամսաթիվը պետք է լիներ ոչ ուշ քան ս.թ. մարտի 12-ը): Սակայն Պատվիրատուն գնահատման նիստ է հրավիրել ս.թ. մարտի 22-ին՝ ևս մեկ անգամ խախտելով կառավարության որոշման համապատասխան կետը:

Պատվիրատուի արձանագրություն թիվ 4-ում, որը տեղի է ունեցել ս.թ. մարտի 22-ին ժամը 11:00-ին, նշված է, որ մատակարարը պահանջվող որակավորման չափանիշները ներկայացրել է ս.թ. փետրվարի 18-ին, իսկ էլեկտրոնային փոստով 27-ին, սակայն պարզ չէ այս արձանագրության 2-րդ կետի հիմնավորումը, բացի այդ մեր հարցմանը ի պատասխան Պատվիրատուն նշել է, որ մատակարարը ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը ս.թ. փետրվարի 25-ին (գրությունը կցվում է): ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման պատասխան է ստացվել ս.թ. փետրվարի 19-ին:

Բացի այդ նույն արձանագրության 2-րդ կետը հղում է ՀՀ ԿԱ 526-ն որոշման 43-րդ կետի 4-րդ ենթակետը, սակայն այդ կետը վերաբերում է հայտերի բացման նիստից հետո կատարվող գործողություններին, որը տեղի է ունեցել ս.թ. փետրվարի 14-ին և Մասնակցին տրամադրվել է 3 աշխատանքային օր որակավորման փաստաթղթեր ներկայացնելու համար և սահմանվել է վերջնաժամկետ, ուստի լրացուցիչ պայմանը հասկանալի չէ, բացի այդ 27.02.2019թ. անթույլատրելի:

Պատվիրատուն նույն արձանագրության 4-րդ կետով անգործության ժամկետ էր նշանակել 5 օրյա ժամկետ սակայն էլեկտրոնային աճուրդների դեպքում այդ ժամկետը սահմանվում է 10 օր, Պատվիրատուին բանավոր ծանուցելուց հետո միայն ս.թ. մարտի 25-ին պատվիրատուն փոփոխեց սահմանված ժամկետները, որով ևս մեկ անգամ խախտում է գնումների մասին ՀՀ օրենսդրությունը:

3. *Մասնակցի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառությունե չափանիշի մասին:*

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 18-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 61-րդ կետի համաձայն Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների,

մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

Ընկերությունը նշել է, որ Մատակարարի կողմից ներկայացված պայմանագիրը՝

ա. Պայմանագրում իբրև ստորագրող կողմ նշված է «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Մուշեղ Խուրշուդյանը, սակայն պայմանագրում ստորագրությունը բացակայում է:

բ. Նույն պայմանագրի առարկան հանդիսանում է դեղորայք և այլ պարագաներ, սակայն իբրև մատակարարում ներկայացված փաստաթղթում չի երևում որևէ դեղի մատակարարման փաստ, որը գնահատել անհնար է, քանի որ գնման պայմանագրում բացակայում է գնման առարկա-տեխնիկական բնութագիր կամ այլ ցանկ, որով պետք է հիմնավորվի մատակարարումների գնման առարկաների տեսակները:

գ. Նշված պայմանագրում, որը կնքվել է 2014թ. հուլիսի 21-ին, բացակայում է պայմանագրի ավարտի ժամկետը, մեկ այլ կետով սահմանվում է, որ տվյալ պայմանագիրը գործում է մինչև կողմերից մեկը գրավոր կերպով չի տեղեկացնի այն դադարացնելու մասին: Հետևաբար տվյալ պայմանագրի գործողության սկզբի և ավարտի ժամկետները անպարզ են:

դ. Պայմանագրի 3.3.1 և 3.3.2 կետերը չեն համապատասխանում սույն պայմանագրի ժամկետների տրամաբանությանը:

ե. Պայմանագրով նախատեսված չէ պայմանագրի գնման առարկա, ապրանքատեսակների գինը, գումարը:

է. Ներկայացված տեղեկանքը, ոչ մի կապ չունի ներկայացված պայմանագրի հետ և չի հավաստում նշված պայմանագրի պատշաճ, ժամանակին և որակով կատարման մասին: Բացի այդ Մատակարարման ավարտը սույն տեղեկանքով նշված է 2019թ. հունվարի 31-ը, իսկ սկիզբը 2017թ հունվարը, ինչով անհասկանալի է դառնում երկու ընկերությունների միջև 2014թ կնքված պայմանագրի փաստը:

Ընկերությունը հայտնել է, որ նշված տեղեկանքը չի նշում, որևէ պայմանագրի համար, ծածկագիր կամ այլ կապ ներկայացված պայմանագրի հետ, նույն իրավիճակն է հաշիվ ապրանքնագրերի հետ, իսկ ընդունման հանձնման արձանագրությունները առհասարակ բացակայում են:

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Պատվիրատուի կողմից հայտարարված և գնման ընթացակարգի ժամանակացույցն իրականացրած արձանագրությունները համարել խախտում:

2. Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը որակել իբրև անբավարար:

3. Մասնակցի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառությունե չափանիշը որակել անբավարար:

4. «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար:

Ի լրումն բողոքի «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ներկայացվում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի 1.5 կետով ամրագրված դիրքորշման լրացուցիչ փաստարկներ, այն է՝ Միջազգային առողջապահական մակնիշավորման համաձայնագիր, որը կնքված է ԵՄ, ԱՄՆ, Կանադայի և Ճապոնիայի ներկայացուցիչների կողմից, որի 5.2 կետի «դ» ենթակետով հստակ պահանջ է ներկայացվում արտադրողին հերմետիկ փակվող տուփերի վրա սպառողի համար առանց երկակի ընթերցման հնարավորության նշել տվյալ ռեագենտի ոչ միայն պիտանելիության ժամկետը, պահպանման պայմանները, այլև հերմետիկ տուփն առաջին անգամ բացելուց

հետո տվյալ ռեագենտի օգտագործման և պիտանելության ժամկետները, որի ընթացքում վնաս չի հասցվում տվյալ ռեագենտն օգտագործողի առողջությանը (փաստաթուղթը կազմված և հաստատված է անգլերենով: Կցվում է N1):

Ընկերությունը հայտնել է, որ կից ներկայացվում է նաև (ISO 15223-1-2014 բժշկական սարքավորումների) սիմվոլներ, կիրառումը բժշկական սարքավորումների վրա մակնանշման դեպքում):

Նշված ISO-ի 5.1.4 կետով ամրագրված է, որ որոշ բժշկական սարքավորումների համար, որոնց թվին է դասվում, (in vitro) մակնշումը և այդ մակնշմանը պատկանում է «Contour Plus» ապրանքանշանը, 5.1.4 կետում նշված սիմվոլը և այդ սիմվոլի առկայությունը, որով արտադրողը մակնանշում է տվյալ ապրանքի պիտանելության ժամկետը, սակայն այդ ժամկետը գործում է միայն մինչև բժշկական սարքավորման սրվակը բացելը (փսատաթուղթը կցվում է N2):

Ընկերությունը ՀՀ ԱՆ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշման վերաբերյալ հայտնել է, որ Պատվիրատուի 1.1 կետի պարզաբանումը ընդունելի է, իսկ 1.2 կետը գնահատում է ոչ լիարժեք:

Ընկերությունը նշել է, որ 1.3 կետի վերաբերյալ շարունակում է պնդել, որ գնահատող հանձնաժողովի կողմից գնահատումը կարող է առաջացնել թյուր ըմբռնում:

1.4 ա. Մասնակցի կողմից ներկայացված և այս կետով ամրագրված ցուցանիշները չեն համապատասխանում իրար: Մասնակիցն իր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում գրել է 5-45 C աստիճան, սակայն իր բնօրինակ տեխնիկական բնութագրում նշված է 0-30 C աստիճան (ապրանքի տուփը, տեխնիկական բնութագիրը կցվում են, N 3)

բ. Պատվիրատուի կողմից գրված 0-30 C հիմնավորումը, որ 0-30 C վերաբերում է պահպանման ժամկետին հակասում է մաթեմատիկայի և ֆիզիկայի չափման միավորների սահմանմանը,

գ. Հաշվի առնելով «ա» և «բ» կետերը՝ նորից պնդում ենք, որ մասնակիցը ներկայացրել է թյուր տեղեկություն, որը պատվիրատուի կողմից առնվազն շտկման կարիք էր պահանջում, սակայն նման բան չի արվել:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուի պնդումը 1.5 կետի վերաբերյալ անհասկանալի է, իսկ սարքի բնութագրի վերաբերյալ ցանկանում է ուշադրությունը հրավիրել 1.1 կետին,

որում հիշատակվել է ԳՄԱ դասակարգման (CPV) կոդի անվանումը, որը հատկապես վերաբերում է թվով 1 գնման առարկային. ուստի նորից պնդում ենք, որ 1 CPV կոդի տակ 2 և ավելի գնման առարկաների տեխնիկական բնութագրեր ներկայացնելը գնահատման գործընթացն առնվազն խեղաթյուրում է:

Ընդհանրացնելով՝ 1-ին բաժինը (մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրեր) Ընկերությունը գտնում է, որ ՀՀ ԱՆ գրության 1-ին բաժինն ամբողջությամբ չի պարզաբանում Ընկերության կողմից ներկայացված բողոքի 1-ին բաժնում ներկայացված կետերը: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ընկերությունը կարծում է, որ դա նշանակում է, որ Պատվիրատուն համաձայն է, այն կետի հետ, որի մասին առարկություն չի ներկայացրել: Մասնավորապես, Ընկերության «Բողոքի» 1.5 կետով ամրագրված դիրքորոշումը:

Ընկերությունը հայտնել է, որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի պնդումը 1.5 կետի վերաբերյալ մնում է նույնը, ավելին, գրությամբ ներկայացված N 1 և N 2 փաստաթղթերը սաստկացնում են և իրավական հիմք են հանդիսանում Ընկերության կողմից հայտնած անհանգստությանը:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի գրության 2.1.1 կետի հետ ամբողջությամբ համաձայն չի, և Ընկերության կողմից ներկայացված «Բողոքի» 3-րդ բաժնում նշված բոլոր կետերը հիմք են հանդիսանում պնդել, որ խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված «Մասնագիտական փորձառության» որակավորման չափանիշի ներկայացման և գնահատման կարգը:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուի գրության 2.2 կետում բերված փաստարկները գնահատում է բողոքից դուրս, սակայն չի թերագնահատում գնման առարկայի կարևորությունը, նշանակությունը և հատկապես, սպառողի կյանքի անվտանգությունը, որին տալիս է առաջնային նշանակություն:

Ընկերությունը նշել է, որ ի պատասխան այդ պնդումներին՝ բողոքից դուրս հայտնում է իր կարծիքը, այն է՝

ՀՀ ԱՆ-ի կողմից 2018թ. դեկտեմբերին հայտարարվել էր «Գյուկեմետրի թեսթերիզների» ձեռքբերման մրցույթ, որը չեղյալ է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, սակայն գնման ընթացակարգի վերահայտարարումը ս.թ

2019թ. փետրվարի 1-ին մտահոգություն է առաջացնում Պատվիրատուի կողմից 2.2 կետում նշված ժամկետների վերաբերյալ:

Գրության վերջին պարբերությանն ի պատասխան հայտնում ենք, որ 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած մատակարարների կողմից ներկայացված գնային առաջարկները 1-ին տեղ զբաղեցնելու դեպքում նախարարության տնտեսումն էականորոն չի տարբերվելու նշված գումարից:

Ընկերությունը հայտնել է, որ ամփոփելով վերոնշյալը՝ ևս մեկ անգամ պնդում է թե՛ ներկայացված տեխնիկական բնութագրի, թե՛«Մասնագիտական փորձի» մասով հաղթող կազմկերպության հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի ևս մեկ անգամ խնդրել է պարտավորեցնել ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2019թ. ժամը 12:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված միջնորդությամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 22.04.2019թ. միջանկյալ որոշմամբ ԳԲՔԱ-ՆԳ-2019/10 բողոքով ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 22.04.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ Contour Plus թեստ-երիզների ծագման երկիրն է Ճապոնիան, իսկ Contour Plus գլյուկոմետրի ծագման երկիրը՝ Ինդոնեզիան՝ կից ներկայացնելով ծագման սերտիֆիկատները:

Վերոհիշյալ գրությամբ «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտնել են նաև, որ 0-30°C ջերմաստիճանը թեստ երիզների պահպանման ջեմաստիճանն է, ինչը նշված է թեստ-երիզների ուղեցույցում, իսկ աշխատանքային ջերմաստիճանի դիապազոնն է՝ 5-45°C, որը նշված է Contour Plus գլյուկոմետրի ուղեցույցում:

«ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն նշել է, որ Contour Plus թեստ-երիզների պիտանելիության ժամկետը չի փոխվում՝ անկախ տուփի բացման պայմանից, հակառակի մասին որևէ նշում տուփի վրա առկա չէ: Առկա է նաև գրություն արտադրող ընկերության կողմից այն մասին, որ թեստ-երիզների ժամկետը չի փոխվում՝ անկախ տուփի բացման պայմանից:

3. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ առողջապահության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ.

«Ստորև ներկայացվում է բողոքում արծարծված՝ տեխնիկական բնութագրին և գնման ընթացակարգին առնչվող հարցերի վերաբերյալ առողջապահության նախարարության դիրքորոշումը, մասնավորապես.

1. *Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիր*

1.1 «Գլյուկոմետրի թեստ-երիզը» հայտարարված գնման ընթացակարգի գնման առարկայի անվանումն է, իսկ «արյան փորձանմուշի վերցման նշտարներ» անվանումը համապատասխանում է պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրի՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդի անվանմանը, որոնք նույն են:

1.2 Մասնակցի կողմից ներկայացված բնութագրում ապրանքային նշանը՝ «Contur plus», տեխնիկական վրիպակ է, գրվել է «Contour plus»-ի փոխարեն: Իրականում «Contur plus» ապրանքային նշանով ապրանք գոյություն չունի, ինչպես նաև պայմանագիրը կնքելիս պայմանագրի հավելվածում այն նշվելու էր «Contour plus»:

1.3 Սերտիֆիկատների վերաբերյալ, տեղեկացնում եմ, որ «Ճապոնիա»-ն վերաբերվում է թեստ-երիզների ծագման երկրին, իսկ «Ինդոնեզիա»-ն՝ մատակարարի կողմից անհատույց տրամադրվող սարքի ծագման երկրին (սերտիֆիկատները կցվում են):

1.4 «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից նշված ջերմաստիճանը՝ 0-30^{0}C, վերաբերվում է պահպանման ժամկետին:

1.5 Առաջարկվող գլյուկոմետրի թեստ-երիզների բնութագրերը պիտանելիության ժամկետների մասով գնահատվել են բավարար, քանի որ մասնակիցը և արտադրող կազմակերպությունը հավաստել են (արտադրող կազմակերպության կողմից ներկայացված հավաստումը կցվում է), որ թեստ-երիզների ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից: Միաժամանակ, ըստ տուփի ներդիրի նշագրման, թեստ-երիզը կարող է օգտագործվել մինչև պիտանելիության ժամկետի ավարտը, որը նշված է տուփի վրա (եթե նշված չէ օգտագործման վերաբերյալ այլ ժամկետներ, հետևաբար թեստ-երիզների օգտագործման համար պիտանելիության ժամկետը՝ տուփի վրա նշագրված ժամկետն է, ներդիրը և տուփը կցվում են):

1.6 Այն բնութագրի չափանիշները, որոնք Առողջապահության նախարարության կողմից հրավերով չեն պահանջվել, սակայն ներկայացվել են մասնակցի կողմից, վերաբերվում են միայն առաջարկվող սարքի բնութագրմանը: Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ են գլյուկոմետրի թեստ երիզներ, որոնց ձեռքբերման համար էլ հայտարարվել էր գնման ընթացակարգ: Ընդ որում, տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ մատակարարը պարտավոր է նաև նվիրաբերի կամ անհատույց օգտագործման հանձնի շաքարաչափ սարքեր, որոնց դիմաց չի վճարվելու: Հետևաբար, շաքարաչափ սարքերի բնութագրերի պահանջներ չեն սահմանվել և ներկայացված բնութագիրը չի գնահատվել:

2. Գնման ընթացակարգ

2.1 «ԱՄ ՄԵԴԻՔԼ Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է 2014 թվականին «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիրը, որը իրենից ներկայացնում է շարունակական պայմանագիր և սկսել է գործել 2017 թվականից մինչև 2019 թվականը ներառյալ: Միաժամանակ, վերջինս ներկայացրել է նաև պայմանագրի կատարումն ընդունած կողմի՝ «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի գրավոր հավաստումը և հաշիվ ապրանքագրերը՝ պահանջվող

ծավալների չափով: Ներկայացված փաստաթղթերի (կցվում են) հիման վրա «ԱՄ ՄԵԴԻՔԼ Գրուպ» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառությունը» գնահատվել է բավարար:

2.2 Առողջապահության նախարարության կողմից հայտարարված գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանվում է. Գնահատումը պետք է իրականացվեր ոչ թե ս/թ մարտի 12-ը, այլ ս/թ մարտի 14-ին (2019 թվականի փետրվարի 28-ից հաշված 10 աշխատանքային օր): Սակայն գնահատումը չի կատարվել, քանի որ ըստ բանավոր տեղեկությունների «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն պիտանելիության ժամկետի հավաստիության վերաբերյալ հարցադրում էր պատրաստվում ներկայացնել: Հետևաբար՝ այն հետաձգվեց, քանի որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն 2019 թվականի մարտի 15-ին ներկայացրել էր հարցադրում: Հարցադրմանը պատասխանելու համար, առողջապահության նախարարությունը դիմել էր «ԱՄ ՄԵԴԻՔԼ Գրուպ» ՍՊԸ-ին: Վերջինս արտադրող կազմակերպության կողմից ներկայացրել էր հավաստող փաստաթուղթ, որն 2019 թվականի մարտի 20-ին էլեկտրոնային փոստով ներկայացրել էր «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն (փաստաթղթերը կցվում են, հարցադրման և պատասխանի տրամադրման վերաբերյալ տեղեկատվությունը արձանագրվել է 2019 թվականի մարտի 22-ի թիվ 4 արջանագրությունում): Պատվիրատուն նշել է, որ այս ամենից հետո 2019 թվականի մարտի 22-ին տեղի է ունեցել ամփոփման նիստ և անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացույցային օրը՝ հաշվի առնելով, գլյուկոմետրի թեստ-երիզներով հրատապ ապահովման անհրաժեշտությունը: Սակայն հաշվի առնելով, որ մասնակիցները ծանուցումը ստացել էին 2019 թվականի մարտի 25-ին (քանի որ էլեկտրոնային աճուրդի խափանման պատճառով համակարգը չի աշխատել), 2019 թվականի մարտի 25-ին տեղի է ունեցել անգործության նոր ժամկետի սահմանման նիստ:

Պատվիրատուն հայտնել է, որ վերոգրյալ թեստ երիզները անվճար տրամադրվում են շաքարային դիաբետով տառապող 0-ից մինչև 18 տարեկան երեխաներին և դեռահասներին՝ եռամսյակային կտրվածքով: 2019 թվականի երկրորդ եռամսյակի հերթական հատկացումը, Առողջապահության նախարարության կողմից, տեղի չի ունեցել, քանի որ թեստ երիզների մնացորդային պաշարները սպառվել են: Թեստ երիզների ապահովման գործընթացը նախատեսվում էր իրականացնել վերոնշյալ ընթացակարգի շրջանակներում, առնվազն պայմանագրի ժամկետ սահմանելով սույն թվականի ապրիլի 10-

ը, սակայն պայմանագրի հետաձգման պատճառով թեստ երիզների ապահովվումը ընդհատվել է, որի արդյունքում շաքարային դիաբետով տառապող 0-ից մինչև 18 տարեկան երեխաները և դեռահասները հնարավորություն չունեն չափելու և վերահսկելու, ինչպես նաև զրկված են արյան մեջ գլյուկոզայի քանակի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, հետևաբար ներարկվող ինսուլին դեղի ճշգրիտ դոզավորման հնարավորությունից: Ինսուլին դեղի սխալ դոզավորումը կարող է հանգեցնել առողջական մի շարք բարդությունների: Միաժամանակ, նաև պացիենտը չունենալով համապատասխան թեստ երիզները դիմում է տեղամասային պոլիկլինիկա՝ արյան մեջ գլյուկոզայի քանակը անվճար ստուգաչափելու համար, որը հավելյալ ֆինանսական բեռ է պետության համար:

Պատվիրատուն նշել է, որ գնման ընթացակարգի արդյունքում նախատեսվում է մոտ 8 մլն ՀՀ դրամի տնտեսում:

ՀՀ առողջապահության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2018թ. ժամը 12:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են բողոքի դեմ և հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար գլյուկոմետրի թեսթ-երիզների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ):

2. Աճուրդի հրավերով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

անվանումը եւ ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիր
Արյան փորձանմուշի վերցման նշտարներ	Շաքարաչափ սարքի համար նախատեսված թեստ երիզ: Փաթեթավորումը պետք լինի գործարանային տուփով, բայց ոչ ավել քան 100 հատ: Թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարման պահին մնացորդային պիտանիության ժամկետը 12 ամիս: Թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում, մատակարարը պարտավոր է նաև նվիրաբերել կամ անհատույց օգտագործման հանձնել շաքարաչափ սարքեր (600 հատ): Չափման արագություն՝ ոչ ավել քան 6 վրկ: Չափման միջակայքը՝ առնվազն 1,1 -33.3 մմոլ/լ: Արյան նմուշի ծավալը՝ ոչ ավել քան 0,65մկլ: Մասնակիցը պետք է ներկայացնի որակի սերտիֆիկատ տվյալ խմբաքանակի համար հաստատված արտադրող գործարանի կողմից: Մատակարարը պարտավոր է տրամադրել՝ ոչ պակաս քան 12 ամսվա երաշխիք տրամադրած սարքերի համար: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485, ISO 15197 կամ ГОСТ Р ИСО 15197:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 14.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

4. «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով աճուրդի հայտի N 3 հավելվածով ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	Անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը
1	Արյան փորձանմուշի վերցման նշտարներ Գլյուկոմետրի թեստ-երիզներ N 50	Contur plus	ASCENSIA Diabetes Care	Ճապոնիա	Շաքարաչափ սարքի համար նախատեսված թեստ երիզ: Փաթեթավորումը գործարանային տուփով 50 հատ: Թեստ-երիզների ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարման պահին մնացորդային պիտանության ժամկետը 12 ամիս: Չափման ժամանակահատվածը՝ 5վրկ: Չափման միջակայքը՝ 0,6-33,3 մմոլ/լ: Արյան նմուշի ծավալը՝ 0,6մկլ: Աշխատանքային ջերմաստիճանը՝ 5-45°C: Աշխատանքային հարաբերական խոնավություն 10%-93%: Հեմատոկրիտի թույլատրելի միջակայքը 10-70%: Գործառնական բարձրություն՝ ծովի մակարդակից մինչև 6300մ: Արյան ծավալի անբավարարության դեպքում 30վ. Ընթացքում արյուն ավելացնելու երկրորդ հնարավորություն

					(Second chance): Տվյալների փոխանցում համակարգչային USB լարի միջոցով: Համակարգը համապատասխանում է ISO 15197:2013, ISO 13485:2012 չափորոշիչների պահանջներին: Տվյալ համակարգը համապատասխանում է եվրոպական դիրեկտիվի 98/79/EC IVD չափորոշիչներին: Թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում մատակարարը կնվիրաբերի կամ անհատույց օգտագործման կհանձնի շաքարաչափ սարքեր (600 հատ)

5. Աճուրդի գնահատող հանձնաժողովը 25.02.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ հաշվի առնելով, որ 11.02.2019թ.-19.02.2019թ. ընկած ժամանակահատվածում eauction.armeps համակարգում ի հայտ են եկել խնդիրներ, որի հետևանքով հնարավոր չի եղել իրականացնել, շարունակել հայտարարված աճուրդը, ուստի առաջնորդվելով ֆինանսների նախարարության 22.02.2019թ. գրությամբ, որոշվել է Աճուրդը շարունակել թղթայի տարբերակով:

6. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորումը հիմանվորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ (վերջնաժամկետ՝ 28.02.2019թ. ժամը 18:00):

7. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 22.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են 18.02.19թ., իսկ էլեկտրոնային փոստով նաև՝ 27.02.19թ.:

8. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն՝ 49 188 000 ՀՀ դրամ պայմանագրային գնով, ճանաչվել է հաղթող մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի 16.04.2018թ. բողոքը և ի լրումն բողոքի 22.04.2019թ գրությունը, «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 22.04.2019թ գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության գրությունը, «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, ***որ <u>առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով</u> սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի***

տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է***

նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար գլյուկոմետրի թեսթ-երիզների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի հրավերով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

անվանումը եւ ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիր
Արյան փորձանմուշի վերցման նշտարներ	Շաքարաչափ սարքի համար նախատեսված թեստ երիզ: Փաթեթավորումը պետք լինի գործարանային տուփով, բայց ոչ ավել քան 100 հատ: Թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարման պահին մնացորդային պիտանիության ժամկետը 12 ամիս: Թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում, մատակարարը պարտավոր է նաև նվիրաբերել կամ անհատույց օգտագործման հանձնել շաքարաչափ սարքեր (600 հատ): Չափման արագություն՝ ոչ ավել քան 6 վրկ: Չափման միջակայքը՝ ***առնվազն 1,1 -33.3 մմոլ/լ:*** Արյան նմուշի ծավալը՝ ոչ ավել քան 0,65մկլ: Մասնակիցը պետք է ներկայացնի որակի սերտիֆիկատ տվյալ խմբաքանակի համար հաստատված արտադրող գործարանի կողմից: Մատակարարը պարտավոր է տրամադրել՝ ոչ պակաս քան 12 ամսվա երաշխիք տրամադրած սարքերի համար: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485, ISO 15197 կամ ГОСТ Р ИСО 15197:

Աճուրդի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ***համաձայն հավելված N 3-ի***.

բ. հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.

«ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ***իր կողմից ներկայացված*** մասնակցության դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով ***առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը <u>համապատասխանում են</u> նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին***:

Նույն հայտարարության համաձայն՝ պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 14.02.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, որին սահմանված կարգով ծանուցվել է ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով աճուրդի հայտի N 3 հավելվածով ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	Անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը

1	Արյան փորձանմուշի վերցման նշտարներ Գլյուկոմետրի թեստ-երիզներ N 50	Contur plus	ASCENSIA Diabetes Care	Ճապոնիա	Շաքարաչափ սարքի համար նախատեսված թեստ երիզ: Փաթեթավորումը գործարանային տուփով 50 հատ: Թեստ-երիզների ժամկետը չի փոխվում անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարման պահին մնացորդային պիտանության ժամկետը 12 ամիս: Չափման ժամանակահատվածը՝ 5վրկ: Չափման միջակայքը՝ ***0,6-33,3 մմոլ/լ***: Արյան նմուշի ծավալը՝ 0,6մկլ: Աշխատանքային ջերմաստիճանը՝ 5-45°C: Աշխատանքային հարաբերական խոնավություն 10%-93%: Հեմատոկրիտի թույլատրելի միջակայքը 10-70%: Գործառնական բարձրություն՝ ծովի մակարդակից մինչև 6300մ: Արյան ծավալի անբավարարության դեպքում 30վ. Ընթացքում արյուն ավելացնելու երկրորդ հնարավորություն (Second chance): Տվյալների փոխանցում համակարգչային USB լարի միջոցով: Համակարգը համապատասխանում է ISO 15197:2013, ISO 13485:2012 չափորոշիչների պահանջներին: Տվյալ համակարգը համապատասխանում է եվրոպական դիրեկտիվի 98/79/EC IVD չափորոշիչներին: Թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում մատակարարը կնվիրաբերի կամ անհատույց օգտագործման կհանձնի շաքարաչափ սարքեր (600 հատ)

Այսպիսով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիրը, «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի՝ Աճուրդի հրավերի 3-րդ հավելվածով ներկայացրած տեխնիկական բնութագիրը արձանագրում եմ, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ չափման միջակայքի մասով չի համապատասխանում Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչներին: Ուստի գտնում եմ, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերվում է «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված այն դիտարկմանը, որ «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի ապրանքային նշանը նշված է «Contur plus», սակայն գնման առարկան չի համապատասխանում հրավերով նշված տեխնիկական բնութագրով նշված ապրանքային նշանին, ապա սույն մասով արձանագրում եմ, որ «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից

տեխնիկական բնութագրում նշված ապրանքային նշանը՝ «Contur plus», տեխնիկական վրիպակ է, գրվել է «Contour plus»-ի փոխարեն, որը հաստատվում է նաև «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Աճուրդի շրջանակներում ներկայացված ապրանքի ծագման սերտիֆիկատով, որտեղ հստակ նշված է «Contour plus», ուստի գտնում եմ, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի կողմից տեխնիկական բնութագրի մասով ներկայացված այն դիտարկմանը, որ Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով ծագման երկիրը նշված է Ճապոնիա, սակայն ներկայացված սերտիֆիկատներում նշված է մեկ Ինդոնեզիա, իսկ մեկ այլ սերտիֆիկատում Ճապոնիա, որը շփոթություն է առաջացնում տվյալ ապրանքի ծագման երկիր հանդիսանալու վերաբերյալ, ապա սույն մասով արձանագրում եմ, որ, «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Աճուրդի շրջանակներում ներկայացվել է երկու սերտիֆիկատ, քանի որ Պատվիրատուի կողմից Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանվել է, որ թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում, մատակարարը պարտավոր է նաև ***նվիրաբերել կամ անհատույց օգտագործման հանձնել*** շաքարաչափ սարքեր (600 հատ): Միաժամանակ արձանագրում եմ, որ ապրանքի ծագման սերտիֆիկատում ծագման երկիր նշված է Ճապոնիա, որը համապատասխանում է Ընկերության կողմից Հավելված 3-ով նշվածին, ուստի գտնում եմ, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական բնութագրով ներկայացված շաքարաչափ սարքի չափորոշիչներին վերաբերող դիտարկումներին, ապա արձանագրում եմ, որ շաքարաչափ սարքը Աճուրդի շրջանակներում չի հանդիսանում գնման առարկա, այլ ընդամենը Պատվիրատուի կողմից հրավերով նշվել է, որ թեստ-երիզների մատակարարման հետ միաժամանակ, պայմանագրով սահմանված ժամկետներում, մատակարարը պարտավոր է նաև ***նվիրաբերել կամ անհատույց օգտագործման հանձնել*** շաքարաչափ սարքեր, ուստի

գտնում եմ, որ նման պայմաններում գնահատում իրականացնելը հակասում է Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի բողոքով ներկայացված այն դիտարկմանը, որ Պատվիրատուի կողմից ներկայացված է պահանջ՝ փաթեթավորումը պետք է լինի գործարանային տուփով, բայց ոչ ավել քան 100 հատ: Թեստ-երիզների ժամկետը չպետք է փոխվի անկախ տուփի բացման պայմանից: Մատակարարի կողմից ներկայացվող որակավորման փաստաթղթերով կամ տեխնիկական բնութագրով ներկայացման վերոնշյալ պահանջը հավաստող որևէ փաստ բացակայում է, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Աճուրդի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝ իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ***հավելված N 3-ը,*** նման պայմաններում գտնում եմ, որ Պատվիրատուն տվյալ փուլում պետք է գնահատի մասնակցի կողմից ներկայացված Հավելված 3-ի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

Անդրադառնալով բողոքի երկրորդ հիմքին՝ հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

«Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն բողոքով հայտնել է, որ «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից որպես մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող պայմանագրում բացակայում է «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված չէ պայմանագրի գնման առարկա, ապրանքատեսակների գինը, գումարը, իսկ ներկայացված տեղեկանքը, ոչ մի կապ չունի ներկայացված պայմանագրի հետ և չի հավաստում նշված պայմանագրի պատշաճ, ժամանակին և որակով կատարման մասին:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Պատվիրատուի կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2019/10 բողոքի քննության շրջանակներում էլեկտրոնային եղանակով ներկայացվել են «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ

ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից որպես նմանատիպ (համանման) ներկայացված պայմանագիրը, որտեղ առկա է «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը, հետևաբար արձանագրում եմ, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի պնդումն այն մասին, որ «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ (համանման) պայմանագիրը ստորագրված չէ, անհիմն է:

Միաժամանակ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից բողոքի քննության շրջանակներում ներկայացված հաշիվ-ապրանքագրերը և տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, արձանագրում եմ հետևյալը.

Այսպես, Կարգի 61-րդ կետի 2-ին ենթակետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝*** տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ ***տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:*** Տվյալ դեպքում «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել են «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի և «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 21 հուլիսի 2014թ. կնքված պայմանագիրը և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները նաև տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, որոնց համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը պատշաճորեն կատարվել են Ընկերության կողմից և սահմանված կարգով ընդունվել են պատվիրատուի կողմից, հետևաբար պայմանագիրը պետք է դիտարկել որպես Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ պատշաճ կատարված պայմանագիր:

Այսպիսով Կարգի 61-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:***

Ամփոփելով վերը նշված փաստերը, արձանագրում եմ, որ «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի «Մասնագիտական փորձառություն» չափանիշը բավարարում է Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջներին, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն առաջնորդվելով Կարգի 61-րդ կետի 4-րդ ենթակետով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներով, բավարար գնահատելով «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, ուստի գտնում եմ, որ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերվում է «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից վկայակոչված այն հիմքին, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, ապա հայտում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու ***հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:*** Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը ***<u>առնվազն 10 օրացուցային օր է</u>***: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

Այսպիսով, արձանագրում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից 22.03.2019թ. <u>www.gnumner.am</u> կայքում հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի մեջ նշվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 2019 թվականի մարտի 23-ից մինչև 2019 թվականի մարտի 27-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուի կողմից 25.03.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որում նշվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 2019 թվականի մարտի 26-ից մինչև 2019 թվականի ապրիլի 4-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Այսպիսով արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից անգործության ժամկետի մասով իրականացվել է համապատասխան շտկում և համապատասխանեցվել է Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջին:

Դրա հետ մեկտեղ արձանագրում եմ, որ բողոքաբերը օգտվել է անգործության ժամկետում իր բողոք ներկայացնելու իրավունքից: Միաժամանակ, գտնում եմ, որ սույն հարցն ուղղակիորեն կապված չէ բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի առարկայի և պահանջի հետ, ուստի սույն հարցը չի կարող դիտարկվել որպես էական սույն բողոքի շրջանակներում:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի՝ Պատվիրատուի կողմից իրականացված ընթացակարգային խախտումների վերաբերյալ դիտարկումներին, ապա գտնում եմ, որ սույն հարցն ուղղակիորեն կապված չէ բողոքաբերի կողմից ներկայացված բողոքի առարկայի և պահանջի հետ, ուստի սույն հարցը չի կարող դիտարկվել որպես էական սույն բողոքի շրջանակներում, միաժամանակ արձանագրում եմ, որ տվյալ ժամանակահատվածում eauction համակարգում առաջացած տեխնիկական խնդիրների հետևանքով է, որ խախտվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգով սահմանված պահանջների պահպանմամբ անցկացնելու և իրականացնելու ընթացքն, միաժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուն հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.02.2019թ. պատվիրատուներին ուղղված շրջաբերականը, որոշել է Աճուրդը շարունակել թղթային տարբերակով:

Այսպիսով՝ վերը նշված հիմանվորումների շրջանակներում, գտնում եմ, որ «Կոնցեռ-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 16.04.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2019/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԱՄ ՄԵԴԻՔԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը տեխնիկական բնութագրի մասով բավարար գնահատելու մասին որոշումը:

2.«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի բողոքի պահանջը մյուս կետերի մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**